

ՀՏԴ 802.0:37-5

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԲԱՔՍԹՈՆՅԱՆ ԵՎ ԼՈՈՒՐԵՆՍՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԼԵԶՎԱՍՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԵԿՆԱԿԵՏ)
Գասպարյան Ն. Հ.

Հոդվածի սահմաններում քննության են առնված հայ ինքնության երկու չափազանց տարբեր մեկնաբանություններ:

Ճամփորդելով Հայաստանում և մանրամասն ուսումնասիրելով թուրքական լծի տակ ապրող հայի դաժան կյանքը, ինքնությունը, հոգեկերտվածքը, հոգեբանությունը, կրոնը, մշակույթը՝ Բաքսթըն եղբայրները եզրահանգում են, որ հային պետք է անհապաղ փրկել բարբարոս թուրքից, և որ հային կարելի է «քաղաքակրթել» Բրիտանիայի օգնությամբ: Լոուրենս Արաբացու կարծիքով «ամեն առումով կատարյալ», «երդվյալ քրիստոնյա բարի հայի» ներկայությունից աշխարհը պետք է ազատվի ցեղասպանության փորձ ունեցող ամերիկացու օգնությամբ՝ հային ենթարկելով «կատարյալ բնաջնջման»:

Բանալի բառեր. հայ ինքնություն, քաղաքակրթել, ցեղասպանություն, դեմոգրաֆիա, տնտեսական նախանձ:

Նախաբան: Հոդվածում լեզվամշակութային և ճանաչողական դիրքերից վերլուծության են ենթարկվում բրիտանացի միսիոներներ Բաքսթընների և բրիտանացի ռազմական գիտակ ու լրտես Լոուրենս Արաբացու՝ հայ ինքնության հետաքրիր և խորհմաստ մեկնությունները: Իբրև **սկզբնաղբյուրներ** ընտրված են 1914թ. Բաքսթընների հեղինակած հուշագրություն-հաշվետվությունը՝ *«Ճամփորդությունն ու քաղաքակա- նությունը Հայաստանում»* [1], իսկ Լոուրենս Արաբացու տեսակետների վերլուծության համար ընտրված է ամերիկացի լրագրող Լինքոլն Սթեֆֆենսին 1919 թ. տված բացառիկ *«Armenians Are Impossible»* հարցազրույցը [2]: Քննության են առնված նաև հայ հոգեկերտվածքն ու լեզվամշակույթը բնութագրող անվանողական միավորներ՝ փորձելով

վերլուծության միջոցով վեր հանել այդ հասկացությունների արտալեզվական հիմքը:

Աշխատանքի արդիականությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ համաշխարհայնացման դարաշրջանում ազգային ինքնության և լեզվամշակույթի հարցերը ենթարկվում են ձևաբովանդակային փոփոխությունների՝ պայմանավորված ամերիկյան և եվրոպական արժեքների ազդեցությամբ:

Աշխատանքի նպատակն է՝ վերլուծելով Բաքսթընների և Լոուրենս Արաբացու մեկնաբանությունները հայ ինքնության, հայի՝ հոգեկերտվածքի, մշակույթի, վարքի բնութագրական գծերի վերաբերյալ՝ վերահիմաստավորել դրանք՝ ելնելով ժամանակի պահանջներից:

Ինքնության խնդիրների շուրջ

Ըստ Էնթընի Սմիթի՝ ազգային ինքնությունը արժեքների, խորհրդանիշի, հիշողությունների, պատումների, սովորույթների պահպանումն ու շարունակական վերարտադրումն է, որն ազգերի համար ստեղծում է ժառանգություն, և անհատը, դառնալով այդ արժեքների, խորհրդանիշի, հիշողությունների, պատումների, սովորույթների անմիջական կրողն ու տերը, ընկալվում է այդ ժառանգության միջոցով [3]: Ըստ էության, կարևորվում են պատմական հիշողությունը, ազգային ինքնագիտակցությունն ու արժեհամակարգը, որոնք ստեղծում են կայուն հիմք՝ ժամանակի ընթացքում ազգի պարբերաբար վերակառուցման համար [4]: Սմիթի կարծիքով, ցանկացած մարդկային ինքնության հիմնական տարրը հիշողությունն է և անցյալի հետ անձնական կապի առկայության գիտակցումը: Ե՛վ պատմական, և՛ հանրային հիշողությունը կազմվում է ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագներից, որտեղ կարևորվում են մարդկանց գիտելիքն ու վերաբերմունքը այդ դրվագների վերաբերյալ [5,6]: Նշված համատեքստում Լ. Աբրահամյանը «դեպի իր արմատները ձգտող» հային փորձում է ներկայացնել որպես «առաջինը լինելու բարդույթ ունեցող» [7]:

Պատահական չէ, որ համաշխարհայնացման ներկա գործընթացների պայմաններում ազգային բնավորությանը և աշխարհընկալման յուրահատկություններին վերաբերող հարցերը հանգամանալից ուսումնասիրության են արժանանում ոչ միայն առանձին գիտակարգերի կողմից, այլև միջգիտակարգային ոլորտներում:

Հայն ու Հայաստանը օտարների աչքերով

Նշենք, որ XIX դարի վերջում և XX դարի առաջին կեսերին ծաղկում ապրեց ճամփորդական փաստավավերագրական ժանրը, և Եվրոպայում, հատկապես Մեծ Բրիտանիայում, մեծ հետաքրքրություն առաջացավ հայի ու Հայաստանի նկատմամբ:

Որպես կանոն, Հայաստան իրականացված ճամփորդությունների ավարտին բրիտանական կառավարության պահանջով ստեղծվում են հավաստի ու անկողմնակալ մանրամասներ ու փաստեր պարունակող հաշվետվություն-հուշագրություններ, որոնք այսօր մեծ արժեք են ներկայացնում որպես Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրներ [8]: Հետազոտողները տեղեկատվություն էին հայտնում նաև հայերի հոգևոր մշակույթի, բարոյական արժեքների ու արժանիքների, ձգտումների և ամենակարևորը՝ ավանդույթների մասին, որը մտածողության որոշակի ձևի արդյունք է, և հանրության տվյալ խմբի կողմից իբրև որոշակի գործառույթի ուղղված պահանջ և գիտակցության ձև, որն ուղղորդում է տվյալ հանրության ներկայացուցիչների գործողությունները [9]:

Բաքաթընները, հային ու Հայաստանը մանրակրկիտ ուսումնասիրելով, պետք է բրիտանական կառավարության պահանջով պարզեին, թե որքանով էր հնարավոր հային «քաղաքակրթել»: Ամենայն հավանականությամբ, Մետաքսի ճանապարհի մենաշնորհային տնօրինումը այն գերնպատակն էր, որին հետամուտ էր բրիտանական կառավարությունը, որը, սակայն, ներկայացվում էր որպես հային «քաղաքակրթելու» ազնիվ ու բարոյական միտում [10]:

Բարձր արժևորելով Բաքաթընների ուղեգրությունը՝ Քրիստոֆեր Ուոքերն ընդգծում է, որ հաշվետվությունը լիովին բացահայտում է իրերի վիճակը Առաջին աշխարհամարտի նախօրեին [11]:

Օսմանյան կայսրություն տեղանվան փոխարեն Բաքաթըններն իրենց հաշվետվության մեջ որպես իրենց ժամանման վայր են նշում Հայաստան տեղանունը: Շուրջ մեկ տարի տևած երկարատև ճամփորդության ընթացքում նրանք ներկայացնում են հային իր հայրենիքում՝ Թուրքահայաստանում, Ռուսահայաստանում, Պարսկաստանի հայաբնակ շրջաններում:

Հայաստանում Բաքաթըններին միանգամից գրավում է հայի աշխատասիրությունը՝ ժայռերի ու սարերի մեջ անջրդի հողերի ոռոգումով հարուստ բերք ստանալու կարողությունը, տների ու խղճուկ կացարանների մաքրությունը, հայ կնոջ առասպելական գեղեցկությունը,

հայ տղամարդու նվիրվածությունն իր ընտանիքին: Ընդ որում՝ նշվում է, որ նույնիսկ այդ ծանր պայմաններում հայերի տները գետնի վրա էին կառուցված, մինչդեռ քրդերը ապրում էին գետնափորներում: Սակայն միսիոներ-ճանապարհորդների համար տպավորիչ էր այն, որ եվրոպական հասարակության մեջ տարածված կարծիքը, ըստ որի՝ հայերը վաճառականներ են, չէր համապատասխանում իրականությանը, և հային ամենևին էլ հատուկ չէր վաճառականի հոգեբանությունը: Նշվում է, որ հայի թշնամու միտումով էր դա տարածվել՝ հայի արժանապատվությունը նվաստացնելու նպատակով: Բաքսթըններն ընդվզելով այդ մտքի դեմ՝ գրում են, որ իրականում հայերը, լինելով արևելյան լեզուների գիտակներ, Եվրոպայում հիմնականում աշխատում էին իբրև ուսուցիչ: Թիֆլիսի հայկական ճեմարանում նրանց հիացնում է ուսուցման մակարդակը, զարմանում են, երբ հայտնաբերում են, որ հայերն աշխատում են Մոնթեսորիի մեթոդներով, այն դեպքում, երբ Եվրոպայում այդ մեթոդները դեռ նոր էին կիրառություն գտնում: Նրանք զարմանում են, որ ամբողջ աշխարհում եկեղեցին միշտ խանգարել է կրթությանն ու գիտությանը, իսկ հայ եկեղեցին եղել է այդ գործընթացի մշտական կազմակերպիչը: Թուրքական անտանելի լծի տակ գոյության պայքար մղող հայերը գումարներ էին ստեղծում ու բարերարներ գտնում դրսի հայերի շրջանում, իրենց որդիների համար եվրոպական փայլուն կրթության հնարավորություններ ապահովում: Բաքսթընները, սակայն, չեն հասկանում, թե ինչու են ոմանք հային վախկոտ անվանում, երբ հայերի մի ամբողջ գյուղի ունեցածն ընդամենը հինգ-վեց հին որսորդական հրացան էր, իսկ ցնցոտիավոր քրդերն անգամ զինված էին ժամանակակից ամենառաակյալ ու թանկ գերմանական զենքով: Բաքսթըններն իրենց հաշվետվությամբ բրիտանական պառլամենտին և եվրոպացուն տեղեկացնում են, որ թուրքական կառավարությանը չենթարկվող, բայց նրա հովանավորությամբ գործող քրդական զինյալ ավազակախմբերը հայկական ջարդերն իրականացնելիս վարձատրվում էին հայերի ունեցվածքով: Հիշատակելով Անդրանիկի քաջերին, Ջեյթունի ինքնապաշտպանության մասնակիցներին՝ Բաքսթընները գտնում են, որ թուրքերը վախենում են հսկայական մտավոր ներուժի տեր հայից, որը տարածաշրջանի միակ կառուցողական տարրն է, և, եթե թուրքը հային խելքով հաղթել չի կարողանում, ապա նրան հաջողվում է դա անել բիրտ ուժի կիրառմամբ: Համաշխարհային գանձարանը հարստացնող տաղանդավոր հայը, ըստ

Բաքսթընների, զենք ունենալու դեպքում ունակ է պաշտպանել ոչ միայն իրեն, այլև կարող է ապահովել ողջ տարածաշրջանի խաղաղությունը: Նա քաջ է և իրադրության մեջ արագ կողմնորոշվող: Ըստ Բաքսթընների վերլուծական մեկնությունների՝ հայերի դժբախտության պատճառը հարկ է փնտրել նրանց զարգացման բարձր աստիճանի, յուրահատուկ օժտվածության և տիրապետողների բարբարոսական մակարդակի միջև եղած տարբերության մեջ: Ճամփորդության ավարտին միսիոներները ցավով նկատում են, որ ամենաանմխիթար վիճակում գտնվում են Թուրքահայաստանի հայերը, ում պետք է անհապաղ փրկել թերզարգացած թուրքից և հայերի ջարդեր կազմակերպող ու վերահսկող թուրքական կառավարությունից, որը ոչ միայն ռեֆորմների ունակ չէ, այլև մնացել է նույն բարբարոսը: Արևմտյան Հայաստանում հայը պայքարում էր ապրելու տարրական իրավունքի համար: Պետության թշնամի հայտարարված այդ նույն պետությանը հավատարիմ հայը հալածվում, տեղահանվում ու աքսորվում, կտտանքների էր ենթարկվում, սպանվում դաժանաբար, մինչ բարբարոս թուրքը տեղահանությունների ու ջարդերի միջոցով տիրանում էր հայերի երկրին՝ լուծելով դեմոգրաֆիայի խնդիրը, իսկ հայերի ոսկիները կօգնեին զենք, զինամթերք ձեռք բերել պատերազմին մասնակցելու համար: Ծանոթանալով հայ ինքնությանն ու հոգեկերտվածքին՝ հանուն ընտանիքի, կրոնի, հայրենիքի մեռնող հային, որով, Բաքսթընների կարծիքով, հայը տարբերվում էր հանուն ընտանիքի, կրոնի, հայրենիքի ապրող անգլիացուց, ունակ էր կազմակերպել ու լուծել ազգի կրթության ու մշակույթի խնդիրները՝ բեմադրություններ դնել, հիանալ համաշխարհային գրականության ու արվեստի գործերով, իսկ ամենաձայրահեղ իրավիճակներում բռունցք դառնալով՝ մոռանալ ներազգային տարաձայնությունները, լինել երկրին նվիրված քաջարի մարտիկ ու զորավար: Հայ կնոջ գեղեցկությունն ու հավատարմությունը, ամուսնու զինակիցն ու ընկերը լինելը նույնպես արժանացել էր Բաքսթընների գնահատանքին: Հային հնարավոր է «քաղաքակրթել» բրիտանական աջակցությամբ: Բաքսթընները որոշում են, որ բարբարոս Արևելքի և քաղաքակիրթ Արևմուտքի միջև անդունդի եզրին հայտնված հայը պետք է փրկվի եվրոպական հանրության օգնությամբ, որը, սակայն, անհասկանալի պատճառներով չէր նկատում թուրքի բարբարոսությունները և հապաղում էր օգնություն առաջարկել:

Այն ամենը, ինչ հիացնում էր Բաքսթըններին հայի արժեքների ու արժանիքների հետ կապված հարուցում էր Լոուրենս Արաբացու

դժգոհությունն ու անթաքույց նախանձը, ում կարծիքով *հայր գիտի, թե ինչպես նյութական բարիքներ ստեղծի, նա տնտեսող է (have no lack of thrift)*: Ըստ Արաբացու՝ բրիտանացին ու ամերիկացին նրան կսովորեցնեն տքնաջան աշխատել, որ հաջողության հասնի (*should teach them to work hard to succeed*), բայց հայր ոչ մի կերպ չի ցանկանում սևագործ աշխատանք կատարել, նա ցանկանում է կիրառել իր մտավոր ներուժը՝ լինել բժիշկ ու իրավաբան, բայց չաշխատել երկրի հանքերում: Կարծես Լոուրենսը հավանության չի արժանացնում հայերի՝ գիտելիքի նկատմամբ սերն ու հակումը: Դա Լոուրենսին ստիպում է վախենալ ու մտահոգվել. կրթության և գիտության ձգտող հայր կձգտի համաշխարհային կառավարման, քանի որ առավել է բոլորից իր տրամաբանությամբ, հոգեբանությամբ և մարմնական կենսունակությամբ (*They have gone forward logically, psychologically, physiologically*): Անզլերեն տարբերակում *logically* արմատը կրկնվում է երեք անգամ՝ ոճական կրկնության միջոցով շեշտադրելով միտքը: Լոուրենսը հայի փոխարեն որոշում է կայացնում. հայերը պետք է աշխատեն Հայաստանի համար, և ոչ թե Հայաստանը՝ հայերի: Որքան էլ արտառոց հնչի, կարծես չցանկանալով, նա, այնուամենայնիվ, խոստովանում է, որ քաղաքակրթության շրջան ապրած չափից դուրս խելացի հայերը օտար նվաճողին չեն ծառայի սևագործ աշխատանք կատարելով: Բաքսթրենները նույնպես նշում են այն մասին, որ ազգային արժանապատվությունը, որն հայ ինքնության բաղադրիչներից է, երբեք թույլ չի տվել նրան գլուխ խոնարհել օտարին: Լոուրենսը խոստովանում է, որ հայերը *քաղաքակրթության առումով ամենաընտրյալն են, ամենազարգացածն ու ամենախելացին (themselves the most intelligent, the most perfectly selected, the most highly developed race in the world - from the civilized point of view)*: Ազգի կատարյալ նկարագիր, սակայն քայլ առ քայլ ի հայտ է գալիս Լոուրենսի հայաստացությունն ու դրա խոր արմատավորված պատճառը: Ըստ Լոուրենսի, ի տարբերություն հային փրկել ցանկացող Բաքսթրենների, Հայկական հարցի միակ հնարավոր լուծումը երդվյալ քրիստոնյա հայերի բնաջնջումն է. հայի թշնամիները *լավ չեն կատարում իրենց գործը*, հային սպանելու հաճույքը մինչև վերջ չեն վայելում. հոգ չեն տանում, որ հայն իսպառ վերանա, ու *միշտ թողնում են մի կնոջ ու մի տղամարդու, որոնք օրվա տքնաջան աշխատանքից հետո* (այսինքն հաստատում է, որ հայր աշխատասեր ու բարիքներ ստեղծող է), *բազմանում են ու տարածվում աշխարհով մեկ (bred and bred and bred, spreading and spreading)*: Ոճական կրկնության

և բաղաձայնային (b, d, s, t, m,l) կիրառության շնորհիվ ստեղծված մեղեդայնության էֆեկտը ի հայտ է բերում Լոուրենսի ընդգծված դժգոհությունը, որն ի վերջո հասնում է չափազանցության. հայերը *գաղտագողի բազմանալով (secretly breeding)*՝ *սփռվում են աշխարհով մեկ (slyly spreading)*՝ *խորամանկորեն լռելով*: Դա ասվում է 1919 թ., երբ համայն հայությունն ու ողջ առաջադեմ մարդկությունն արդեն Հայոց ցեղասպանության ականատեսն էր դարձել:

Լոուրենսը կարծես փորձում է թշնամություն սերմանել *անվնաս հայի* նկատմամբ՝ նրան նսեմացնելով ու ամերիկացի լրագրողին հավաստիացնելով, որ հրեայի և մնացած բոլոր ազգերի լավագույն գծերի մարմնավորող, առաջին քրիստոնյա հայ ազգը փորձելու է բոլոր ազգերին շահագործել: Ըստ Լոուրենսի՝ *հայը կատարյալ է ու Աստծո սիրելին, հայը երբեք չի ցանկանա Հայաստանի հանքերում աշխատել օտար տերության համար*: Նա կազմակերպված ու լուռ բազմանում է և կարող է մի գեղեցիկ օր այնքան հզորանալ, որ թույլ չտա օտարին տեր ու տնօրեն դառնալ իր երկրի բնական հարստություններին: Հայը մտավոր ներուժ ունի, որը նպաստավոր պայմաններում կարող է հային մեծ ապագա խոստանալ: Մեփական հողի վրա ամուր կանգնած հայն անպարտելի է, *նրան պետք է Հայաստանից անջատել*: Հայը չպետք է Հայաստան ունենա, որովհետև, Լոուրենսի կարծիքով, նա իր երկրի հարստությունները ուրիշին կարող է տալ միայն ժամանակավոր օգտագործման, չնայած որ ցանկանում է ապրել ծովափնյա մեծ քաղաքներում, վարձով տալով, շահույթ ստանալով, ակցիաների վաճառքից ստացած եկամտով, կապիտալից և ուրիշի ծանր աշխատանքից ստացված գումարներով: Լոուրենսն այդպիսով ամերիկացի Սթեֆֆրնսին փորձում է համոզել, որ անհրաժեշտ է հային ջնջել երկրի երեսից՝ նախ հեռացնելով իր հայրենիքից: Այո՛, Լոուրենսը ճիշտ է ըմբռնել հայի բնույթը՝ հայը չի նսեմանա օտար շահագործողի առաջ, դա անհարիր է նրա ազգային կերպարին, համակերպվող է, բայց չի հանդուրժի անարդարություն, *կարող է չաշխատել, չստեղծել, չկուտակել սոսկ այն պատճառով, որ օտարին չծառայի*, իսկ չի վերանում, որովհետև *օրհնյալ (blessed) ժողովուրդ է*:

Բնատուր խելքի, արագ կողմնորոշվելու ունակության ու աշխատասիրության շնորհիվ հային հաջողվում է մրցակիցներից առաջ անցնել՝ հարուցելով վերջիններիս նախանձր: Գուցե *տնտեսական նախանձն* է պատճառը, որ Լոուրենս Արաբացուն ստիպում է հայերին կոչել *բարձրագույն աստիճանի անհնարին, անտանելի (And the Armenians are the nth degree.)*: Հային բնաջնջելու համար ամենահարմարը, ըստ Լոուրենսի,

ամերիկացին է, որովհետև ամերիկյան բնիկ հնդկացիներին հաջող բնաջնջելու փորձն արդեն ունի, նաև խղճի խայթ երբեք չի զգացել արածի համար: Թուրքը շատ անկիրթ է հայերին ցեղասպանելու համար, նրանք հայի ստեղծած հարստություններն են միայն ուզում տեր դառնալ, իսկ անգլիացին դեռ մեծ գործ ունի անելու Եվրոպայում: Բայց հայ ինքնուրջյան առանձնահատկություններին քաջածանոթ Լոուրենս Արաբացին վստահ չէ, թե արդյոք օրհնյալ և օտարին չխոհարհվող հային կարելի է երբևէ բնաջնջել, անգամ եթե հայրենիքի անբարենպաստ պայմանները նրան ստիպեն հայրենիքը լքել: Ինչևէ, ըստ նրա, *կատարյալ հայ ազգը ամենակատարյալ կերպով պիտի ոչնչացվի:*

Եզրահանգում

1. Բաքսթընների և Լոուրենս Արաբացու կարծիքները հիմնականում համընկնում էին հայի դրական կերպարի առումով, սակայն եթե առաջինները կոչ էին անում Եվրոպային փրկել արարող քրիստոնյա հային բարբարոս թուրքից, ապա Արաբացին, հային բնութագրելով ամենամարդկային հատկանիշներով, գտնում էր, որ հենց այդ հատկանիշների համար էլ նրան պետք է բնաջնջել:
2. Ըստ Բաքսթընների՝ հայն ունի խիստ տարբերվող ինքնություն, որը թույլ կտա, որ նա «քաղաքակրթվի» Բրիտանիայի օգնությամբ:
3. Իմաստասեր, հպարտ, օտարին գլուխ չխոնարհող, քաջ ու ծայրահեղ իրավիճակներում բռունցք դարձող հայի կերպարը հարյուր տարվա ընթացքում նկատելի փոփոխության չի ենթարկվել, սակայն դժվար է ասել, թե այսպիսի բնութագիր ունեցող հայի հոգեկերտվածքի վրա ինչպիսի անդրադարձ կունենան համահարթեցման ժամանակակից գործընթացները:
4. Հաշվետվության արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակների կողմից տեքստում կիրառվում են Հայաստան, Թուրքահայաստան, Ռուսահայաստան տեղանունները՝ շեշտելով, որ հայն ապրել է իր հայրենիքում:

**БАКСТОНОВСКАЯ И ЛОУРЕНСОВСКАЯ ИНТЕРПРИТАЦИИ
АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ЛИНГВОКУЛЬТУРОЛОГИЧЕСКИЙ
ПОДХОД)**

Гаспарян Н. А.

В статье рассмотрены два взаимоисключающих подхода к интерпретации армянской идентичности. Путешествие по Армении и тщательное изучение тяжелой жизни армян под турецким игом, их истории, идентичности, психологии, менталитета, религии, культуры, привели бакстонов к заключению, что армян следует немедленно спасти от турецких варваров, и что талантливая нация армян «может стать цивилизованной» с британской помощью. По словам арабского исследователя, «идеальная нация армян нуждается в идеальном уничтожении» с помощью американцев.

Ключевые слова: армянская идентичность, цивилизовать, геноцид, демография, экономическая зависть.

**THE ARMENIAN IDENTITY INTERPRETATIONS BY THE BUXTONS AND
LAWRENCE
(LINGUO-CULTURAL PERSPECTIVE)**

Gasparyan N. H.

The article discusses two contradictory approaches to the Armenian identity interpretation. Travelling to Armenia and realizing a detailed investigation of Armenians' hard life under the Turkish yoke, their history, identity, psychology, mentality, religion, culture the Buxtons' concluded: the talented Armenian nation "could become civilized" with the British help, and they should immediately be rescued from the barbaric Turk. According to T. E. Lawrence "the perfect" nation of Christian Armenians needed a "perfect massacre" with American help.

Keywords: Armenian identity, to civilize, genocide, demography, economic envy.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Buxton Noel MP and Rev. Harold Buxton Travel And Politics in Armenia . London . Smith Elder &CO . 1914 . P. 274

2. <http://www.unz.org/Pub/Outlook-1931oct14-00203> (Համացանցից դուրս է բերվել 01. 09. 2019)
3. Smith Anthony D. The Sacred Dimension of Nationalism// Millennium. 2000. Vol. 29, No. 3. P. 796:
4. Zimmer O. Boundary Mechanisms and Symbolic Resources: Towards a Process-Oriented Approach to National Identity// Nations and Nationalism. 2003. Vol. 9. No 2. P. 173.
5. Smith Anthony D. The Sacred Dimension of Nationalism// Millennium. 1991: Vol. 29. N 3. P. 180-181, 187:
6. Աբրահամյան Լ. Ազգային ինքնության հաստատման չորս հարացույցները: //Ինքնության հարցեր. տարեգիրք: 2002: էջ 43-56:
7. Abrahamyan L. Armenian Identity In A Changing World// Costa Mesa. 2006. P. 9, 113.
8. Գասպարյան Ն., Դարբինյան Ա. Օտարների հաշվետվություն-հուշագրությունները որպես Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրման արժեքավոր աղբյուրներ // Գիտության և կրթության նոր հարթություն. հումանիտար և սոցիալական գիտությունների սերիա: 2019. VII (34). էջ 48-53:
9. www.seanewdim.com (Համացանցից դուրս է բերվել 23.10. 2019)
10. Langlois S. Identity Movements. International Encyclopedia of the Social & Behavioral Sciences, Neil J. Smelser and Paul B. Baltes (eds). Elsevier. 2001.
11. Գասպարյան Ն. Հայ ինքնությունը օտարների աչքերով: Մենագրություն: Եր.: Լուսակն: 2017: 112 էջ:
12. <https://books.google.am/books?isbn=1850438889>,p.107> (Համացանցից դուրս է բերվել 23. 04. 2019):

Տեղեկություններ հեղինակի մասին

Գասպարյան Ն. Հ. – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ gasparyanaira59@gmail.com

Տրվել է խմբագրություն 14.04.2020